

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր

I. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՊԱՐԶԵՑՈՒՄ

II. ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐ ԵՎ ՀԴՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ

III. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

IV. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ

I. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՊԱՐԶԵՑՈՒՄ

2009 թվականի հունվարի 1-ից դադարում է գործել «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Սակայն, փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ-ի) համար հարկային բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով ներդրվել են շահութահարկի (եկամտահարկի) պարզեցված հաշվարկման մեխանիզմներ, որոնցից կարող են օգտվել ՓՄՁ-ները, եթե նախորդ օրացուցային տարում ԱԱՀ-ի շեմը (ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը /այդ թվում՝ ԱԱՀ-ին փոխարինող հաստատագրված վճարներով հարկվող օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացումից ստացվող հասույթը/)՝ չի գերազանցել 58,35 մլն. դրամը:

Այն անձանց համար, որոնք 2008 թվականի ընթացքում հանդիսացել են պարզեցված հարկ վճարող, ԱԱՀ-ի շեմի որոշման համար հաշվի է առնվում 2008 թվականի ընթացքում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը (ներառյալ՝ վարձավճարները):

Մինչև ԱԱՀ-ի շեմի գերազանցման պահը ՓՄՁ-ները չեն համարվում ԱԱՀ վճարող, սակայն, իրենց հայեցողությամբ, կարող են համարվել ԱԱՀ վճարող՝ այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնելով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին (այդ դեպքում ԱԱՀ վճարող կհամարվեն հայտարարությունում նշված օբյեկտից սկսած՝ բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրը):

Ուշադրություն՝

Անկախ ԱԱՀ-ի շեմից, ԱԱՀ վճարող են հանդիսանում և շահութահարկը (եկամտահարկը) հաշվարկում են ընդհանուր սահմանված կարգով՝

- *ակցիզային հարկով հարկվող ապրանքներ արտադրողը կամ ներմուծողը.*
- *լիցենզավորման ենթակա այն գործունեություն իրականացնողը կամ լիցենզիա ունեցողը, որի գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է առնվազն 100,0 հազ. դրամ.*
- *այն կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որին պատկանում է այլ կազմակերպության կանոնադրական կապիտալի առնվազն 20%-ը.*
- *այն կազմակերպությունը, որի կանոնադրական կապիտալի առնվազն 20%-ը պատկանում է այլ առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատերին.*
- *այն կազմակերպությունը, որի կանոնադրական կապիտալի առնվազն 20%-ը պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կապիտալի առնվազն 20%-ը.*
- *այն առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների մատակարարումից հաշվարկված եկամուտների կամ ապրանքների ձեռքբերման համար կատարվող ծախսերի առնվազն 80%-ը վերաբերվում է մեկ հարկ վճարողի.*
- *անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մասով:*

Հահութահարկի պարզեցված հաշվարկումը ՓՄՁ-ների համար

ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությունների համար՝ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում՝

- նորմավորվող ծախսերը հաշվի են առնվում ամբողջությամբ (բացառությամբ՝ օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման /տեղաշարժման/ աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, որոնք հաշվի են առնում Կառավարության սահմանած չափերի սահմաններում)։
- հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը չեն կապիտալացվում և հաշվի առնվում ամբողջությամբ՝ դրանց կատարման տարում։
- ներկայացնում են շահութահարկի պարզեցված հաշվարկ։
- նվազագույն շահութահարկը հաշվարկում են առանց հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները հաշվի առնելու։
- չեն կատարում կանխավճարներ, եթե նախորդ տարում՝ չեն համարվել ԱԱՀ վճարող կամ շահութահարկը չի գերազանցել 500,0 հազ. դրամը։

Կառավարության կողմից պետք է սահմանվեն հաշվապահական հաշվառման առանձին ստանդարտ (ստանդարտներ)։

Ուշադրություն՝

2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների այդ տարվա շահութահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի 2%-ից և ավել՝ 10%-ից, որը տվյալ տարվա շահութահարկի վերջնական գումարն է։

Եկամտահարկի պարզեցված հաշվարկումը ՓՄՁ-ների համար

ԱԱՀ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերի համար՝ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում՝

- նորմավորվող ծախսերը հաշվի են առնվում ամբողջությամբ (բացառությամբ՝ օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման /տեղաշարժման/ աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, որոնք հաշվի են առնում Կառավարության սահմանած չափերի սահմաններում)։
- հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը չեն կապիտալացվում և հաշվի են առնվում ամբողջությամբ՝ դրանց կատարման տարում։
- ներկայացնում են եկամտների պարզեցված հաշվարկ։
- նվազագույն եկամտահարկը հաշվարկում են առանց հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները հաշվի առնելու։
- չեն կատարում կանխավճարներ, եթե նախորդ տարում՝ չեն համարվել ԱԱՀ վճարող կամ եկամտահարկը չի գերազանցել 500,0 հազ. դրամը։

Ուշադրություն՝

2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի այդ տարվա եկամտահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի 2%-ից և ավել՝ 10%-ից, որը տվյալ տարվա եկամտահարկի վերջնական գումարն է։

Սոցիալական վճարների հաշվարկումը ՓՄՁ-ների համար

ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը սոցիալական վճարումները կատարում են սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ՝ 3% դրույքաչափով (բայց ոչ պակաս 60,0 հազ. դրամը):

Ուշադրություն՝

Նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում առավելագույնը 5 վարձու աշխատող ունեցող գործատուները ընթացիկ եռամսյակի համար պարզեցված ընթացակարգով ներկայացնում են սոցիալական վճարների եռամսյակային հաշվետվություն (ամսական կտրվածքով)՝ այդ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ից ոչ ուշ:

Նախորդ եռամսյակի որևէ ամսում 5-ից ավել վարձու աշխատող ունեցող գործատուները ընթացիկ եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար պարզեցված ընթացակարգով ներկայացնում են սոցիալական վճարների ամսական հաշվետվություն՝ այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Օրենսդրական փոփոխությունների հետևանքով 2008 թվականից պարզեցված հարկից դուրս եկած հարկ վճարողների հարկման մի քանի հարցերի կարգավորում

2008թ. ընթացքում օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկման կարգից դուրս եկած՝

- առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը կարող են առանց հարկային հաշիվների հաշվանցել արտադրական և այլ առևտրային նպատակներով 2008 թվականին ձեռք բերված ապրանքների և 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդների մասով մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները՝ հաշվարկային կամ վճարումը (բանկային, կանխիկ) հիմնավորող որևէ փաստաթղթի առկայության դեպքում.
- առևտրային կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը կարող են առանց հիմնավորող փաստաթղթերի նվազեցնել 2008 թվականին ձեռք բերված ապրանքների և 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդների մասով կատարված ծախսերը՝ հաշվարկային կամ վճարումը (բանկային, կանխիկ) հիմնավորող որևէ փաստաթղթի առկայության դեպքում.
- առևտրային կազմակերպությունների 2008 թվականի շահութահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի 2%-ից և ավել՝ 10%-ից, որը տվյալ տարվա շահութահարկի վերջնական գումարն է.
- անհատ ձեռնարկատերերի 2008 թվականի եկամտահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի 2%-ից և ավել՝ 10%-ից, որը տվյալ տարվա եկամտահարկի վերջնական գումարն է.
- անհատ ձեռնարկատերերը 2008 թվականի համար կարող են կատարել սոցիալական վճարների վերահաշվարկներ՝ սոցիալական վճարները հաշվարկելով 3% դրույքաչափով (բայց ոչ պակաս 60,0 հազ. դրամը):

**Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և սոցիալական վճարների գծով
նախկինում սահմանված արտոնությունների կիրառման վերաբերյալ**

Լրացուցիչ հնարավորություն է ստեղծվել այն անհատ ձեռնարկատերերի համար, որոնք 2003-2005 թվականների համար ունեն հաշվարկված և չվճարված եկամտահարկի ու սոցիալական վճարների նվազագույն գումարների, դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություն:

Այդ անհատ ձեռնարկատերերը կարող են օգտվել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունից՝ առանց ժամկետային սահմանափակման: Դրա համար անհրաժեշտ է միայն, որպեսզի նրանք իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնեն գրավոր դիմում: Այդ դեպքում 2006 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված և չվճարված հարկային ու սոցիալական վճարների գծով առկա պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման:

Ուշադրություն՝

Արտոնությունից օգտվելու հնարավորություն ունեցող անհատ ձեռնարկատերերը չեն ենթարկվի վարչական պատասխանատվության:

II. ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐ ԵՎ ՀԴՄ-ՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ

Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչներ

➤ Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչները՝

- մինչև 2010 թվականը կվճարեն հաստատագրված վճար, որի մեծությունը հաշվարկվում է հիմք ընդունելով՝ փաստացի օգտագործվող տարածքը, ամսվա ընթացքում գործունեություն իրականացնելու օրերի թիվը և առևտրի իրականացման վայրի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցը,

- 2010 թվականից կհարկվեն ընդհանուր կարգով (այսինքն՝ կվճարեն ԱԱՀ և շահութահարկ/եկամտահարկ):

➤ 2008 թվականի օգոստոսի 21-ին Ազգային Ժողովի կողմից ընդունված օրենքով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց օրվանից 6 ամիս անց առևտրի կենտրոնների, սպառողական ապրանքների շուկաների կազմակերպման գործունեությունը ենթակա կլինի լիցանավորման: Լիցենզավորման ենթակա կլինի նաև այն գյուղատնտեսական շուկաների գործունեությունը, որոնցում իրականացվում է սննդամթերքի վաճառք և գործում են առևտրի օբյեկտներ: Այդ շուկաների կազմակերպիչները պարտավոր են՝

- շուկաներում առևտրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին իրենց հաշվին ապահովել ՀԴՄ-ներով,

- ապահովել շուկայում առևտրային գործունեություն իրականացնողների կողմից ՀԴՄ-ի կիրառումը (վաճառակետներում **ՀԴՄ-ների առկայությունը պարտադիր է 2008 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ շուկաների տարածքում նշված տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀԴՄ-ները նախատեսված էր տեղադրել դեռևս 2007 թվականի հոկտեմբերի 1-ից**),

- ապահովել ՀԴՄ-ները կապուղիներով համակարգչային ցանցին միացումը, համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարանի ներդրումը և շահագործումը (շուկաների կազմակերպիչները պետք է սկսեն նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի մինչև 2008 թվականի հոկտեմբերի 1-ը ապահովեն իրենց մոտ վարձակալվող տարածքներում ՀԴՄ-ների միջև համակարգչային ցանցի ստեղծումը),

- ապահովել, որ շուկաներում առևտրային գործունեություն իրականացնեն միայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը,

- կնքել պայմանագրեր շուկայում գործունեություն իրականացնողների հետ (Կառավարությունը կսահմանի շուկայում գործունեություն իրականացնողի և կազմակերպչի միջև պայմանագրի տիպային ձև, որտեղ կնախատեսվեն հետևյալ պարտադիր վավերապայմանները՝ ՀՎՀՀ-ը, պայմանագրի ժամկետը, վաճառատեղի հերթական համարը, հատկացվող տարածքի մակերեսը, վարձավճարի չափը և այլն)՝ առանց պայմանագիր կնքելու վաճառատեղի տրամադրման համար կիրառվելու են

պատասխանատվության միջոցներ 100,0-300,0 հազ. դրամի չափով (յուրաքանչյուր նման չգրանցված վաճառատեղի համար):

Ուշադրություն՝

ՀԴՄ-ների տեղադրումը և ցանցի անցկացումը պետք է իրականացվի շուկաների, առևտրի կազմակերպման վայրերի տերերի հաշվին և որևէ ֆինանսական ծախս չպետք է առաջացնի առևտուր իրականացնողների համար (այսինքն՝ առևտուր իրականացնողները որևէ գումար չպետք է ծախսեն ոչ ՀԴՄ-ի սարք գնելու, ոչ էլ ցանց անցկացնելու համար):

Ուշադրություն՝

Հարկային մարմնի ղեկավարի 2008 թվականի օգոստոսի 8-ի հրամանով տոնավաճառներում, շուկաներում և առևտրի կազմակերպման այլ վայրերում ՀԴՄ տեղադրած անձանց մոտ հարկային մարմինը ձեռնպահ է մնալու հարկային հաշվառումների գծով ստուգումների իրականացումից մինչև տարեվերջ:

Առևտրի իրականացման վայրերում առևտուր իրականացնողներ

- Առևտուր իրականացնող ֆիզիկական անձը պետք է ունենա անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ՝ գրանցվելով իր հաշվառման (բնակության) վայրի պետական ռեգիստրում (առևտրի իրականացման վայրում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց որպես անհատ ձեռնարկատեր գրանցումը, ՀՎՀՀ և հաշվառման վկայականի տրամադրումը կիրականացվի կենտրոնացված ու արագացված կարգով պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման և հարկային տեսչության կողմից):
- Առևտուր իրականացնող անհատ ձեռնարկատերերի կողմից հարկերի վճարումը՝
 - եթե առևտուր է իրականացվում Երևանում 7մ² (այլ վայրերում 10մ²) տարածքը չգերազանցող կրպակների կամ այլ վաճառատեղի միջոցով, ապա առևտուր իրականացնողը վճարում է ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ (ամսական չափը սահմանված է անկախ աշխատելու օրերից 1մ²-ի համար. Երևանում՝ 1815 դրամ, մարզկենտրոններում, Արվյանում և Վաղարշապատում՝ 792 դրամ, մարզերում՝ 660 դրամ, աղետի գոտում և սահմանամերձ բնակավայրերում՝ 330 դրամ),
 - եթե առևտուր է իրականացվում Երևանում 7մ² (այլ վայրերում 10մ²) տարածքը գերազանցող կրպակների կամ այլ վաճառատեղերի, ինչպես նաև խանութների միջոցով, ապա առևտուր իրականացնողը վճարում է ԱԱՀ և ԵԿԱՍՏԱՀԱՐԿ (որոնք հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով),
 - ոսկերչական արտադրատեսակների վաճառքի համար ամսական հաստատագրված վճարը հաշվարկվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 6600-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ (ամսական չափը սահմանված է անկախ աշխատելու օրերից 1մ²-ի համար. Երևանում՝ 18150 դրամ, մարզկենտրոններում, Արվյանում և Վաղարշապատում՝ 7920 դրամ, մարզերում՝ 6600 դրամ, աղետի գոտում և սահմանամերձ բնակավայրերում՝ 3300 դրամ):

Ուշադրություն՝

Հաստատագրված վճարը փոխարինում է ԱԱՀ-ին և եկամտահարկին ու այլ գործունեություն չիրականացնելու դեպքում ԱԱՀ-ի հաշվարկ չի ներկայացվում:

- Առևտուր իրականացնողների կողմից վարվող հարկային հաշվառումը՝
 - առևտրի իրականացման վայրից առաքումներ իրականացնողները պարտավոր են վարել առաքումների գրանցման գիրք՝ Կառավարության 31.07.1997թ. N314 որոշմամբ սահմանված կարգով,
 - մանրածախ առևտուր իրականացնողները վարում են հասույթների գրանցման գրքեր:

Ուշադրություն՝

Մինչև 58,35 մլն. դրամ շրջանառություն ունեցողները Կառավարության 31.07.1997թ. NN 314 և 315 որոշումներով սահմանված գրքեր չեն վարելու (դրանց փոխարեն Կառավարությունը նախատեսում է սահմանել պարզեցված գրանցումների ձև):

- Եթե եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) հարկ վճարողի կողմից առևտրական տարածքի 1մ² հաշվով ապրանքաշրջանառության ծավալը գերազանցում է 2,1 մլն. դրամը (նախկինում՝ 1,2 մլն. դրամը), իսկ ոսկերչական արտադրատեսակների համար՝ 14,6 մլն. դրամը (նախկինում՝ 2,5 մլն. դրամը), ապա այդ եռամսյակում հարկերը հաշվարկում են ընդհանուր սահմանված կարգով: Սահմանային չափերի փոփոխման հետ կապված 2008 թվականի 3-րդ եռամսյակի համար հաստատագրված վճար վճարողները կարող են կատարել վերահաշվարկներ:

Ուշադրություն՝

Սահմանային չափերը վերաբերվում են հարկ վճարողի բոլոր կրպակների, տաղավարների և այլ վաճառատեղերի միջոցով իրականացվող գործունեությունից ստացված շրջանառության ընդհանուր գումարին:

Առևտրի իրականացման վայրի հետ կապված այլ հարցեր

- Առևտրի իրականացման վայրում գործունեություն իրականացնելու համար անհատ ձեռնարկատերը պետք է կազմակերպչի հետ կնքի գրավոր պայմանագիր և կազմակերպչին վճարի վճար՝ պայմանագրով նախատեսված կարգով և չափով:
- Բացառությամբ առևտրի կենտրոնների, լիցենզավորման ենթակա առևտրի իրականացման վայրի կազմակերպչի և վաճառողի միջև վաճառատեղի (այդ թվում՝ առևտրի օբյեկտի) տրամադրման համար գանձվող ամսական վճարի չափը չի կարող գերազանցել տվյալ վաճառողի տվյալ ամսվա իրացման շրջանառության 1.5%-ը:
- Կանխիկ դրամով մանրածախ վաճառքի և բնակչությանը ծառայություններ մատուցելու դեպքերում (այդ թվում՝ առևտրի իրականացման վայրերում) ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր է: Ընդ որում՝

- պետք է կիրառվեն այնպիսի ՀԳՄ-ներ, որոնք հնարավոր է միացնել առևտրի իրականացման վայրի համակարգչային ցանցին,
- ՀԳՄ-ների գրանցումը կիրականացվի հարկային տեսչության կողմից պարզեցված և արագացված կարգով, ՀԳՄ-ի գրանցման համար դրա տեղադրման վայրի վերաբերյալ որևէ փաստաթուղթ ներկայացնել անհրաժեշտ չէ,
- ՀԳՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԳՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին, որն անհրաժեշտության դեպքում սպասարկող կենտրոն է ներկայացնում անսարքության վերացման համար սահմանված ձևի հայտ՝ մեկ օրինակը ներկայացնելով հարկային տեսչություն (մինչև ՀԳՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԳՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է):

III. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Էլեկտրոնային համակարգով հաշվետվությունների ներկայացման հստակեցում

- Հստակեցվել է, որ հարկ վճարողը պարտավոր է սահմանված ժամկետում հարկային տեսչություն ներկայացնել (մասնավորապես՝ ըստ պատկանելության հանձնել կամ ուղարկել փոստով կամ ներկայացնել էլեկտրոնային համակարգով՝ Կառավարության սահմանած կարգով) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ:

ԱԱՀ հաշվարկներ

- 2009 թվականի հունվարի 1-ից՝
 - սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի օտարման դեպքում ԱԱՀ վճարող ֆիզիկական անձանց ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով Կառավարության կողմից կասեցվող ԱԱՀ-ի պարզեցված հաշվարկների ներկայացման և գումարների վճարման կարգ,

Եկամտահարկի հաշվարկում

- 2009 թվականի հունվարի 1-ից՝
 - աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներից հարկային գործակալները եկամտահարկը բյուջե են վճարելու աշխատանքի վարձատրության հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ,
 - հարկային գործակալները տարվա ընացքում ֆիզիկական անձանց վճարած եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների, պահված (գանձված) և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին անվանական տեղեկություններ են ներկայացնում տարին մեկ անգամ՝ հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ (անվանական տեղեկություններ չեն ներկայացվում, եթե ֆիզիկական անձանց վճարված եկամուտները չեն գերազանցում 300,0 հազ. դրամը),
 - տարվա ընթացքում հարկային գործակալների կողմից եկամտահարկով չհարկված մինչև 300,0 հազ. դրամը չգերազանցող համախառն եկամուտ ստացած ֆիզիկական անձինք հարկային մարմին տարեկան եկամուտների հաշվարկ չեն ներկայացնում:

Հաստատագրված վճարներ

- 2008 թվականի հոկտեմբերի 1-ից՝
 - միայն հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով են կասեցվելու ԱԱՀ-ի և շահութահարկի (եկամտահարկի) գծով հարկային արտոնությունները, իսկ սահմանային չափերը գերազանցելու դեպքում՝ հաշվի են առնվելու ԱԱՀ-ի շահութահարկի (եկամտահարկի) գծով նվազեցումներն և հարկ վճարող համարվելու

համար հիմք ընդունող սահմանները, ԱԱՀ վճարող չհամարվողների համար տվյալ հաշվետու ժամանակաշրջանի հաստատագրված վճարի գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվելու է 0%,

- խանութների, կրպակների և տաղավարների միջոցով (այդ թվում՝ առևտրի իրականացման վայրերում գործող) առևտրական գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողների համար եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալի սահմանային չափը 1մ^2 համար 1,2 մլն. դրամից բարձրացվել է մինչև 2,1 մլն. դրամ, իսկ առևտրի իրականացման վայրերում ոսկերչական արտադրատեսակների վաճառք իրականացնող հաստատագրված վճար վճարողների համար՝ 2,5 մլն. դրամից մինչև 14,6 մլն. դրամ և հաստատագրված վճարի հաշվարկման համար կիրառվող բազմապատիկ մեծությունը 660-ապատիկից մինչև 6600-ապատիկը:

➤ 2010 թվականի հունվարի 1-ից՝

- Երևան քաղաքում՝ 7մ^2 , իսկ այլ վայրերում՝ 10մ^2 առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեությունը (անկախ իրականացման վայրերից) և առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը դադարելու են հարկվել հաստատագրված վճարով:

IV. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Արտադրության և իրացման ծավալների չափազրում

➤ 2009 թվականի հունվարի 1-ից՝

- «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածով սահմանվել է արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման, դրանց իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, դրանց փաստացի գների չափազրման՝ որպես հարկային մարմնի կողմից իրականացվող ուսումնասիրության ընթացակարգերը,

- ԱԱՀ (կամ դրան փոխարինող հաստատագրված վճար) վճարողների կողմից արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման, դրանց իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, դրանց փաստացի գների վերաբերյալ հարկային մարմին ներկայացրած հաշվետվությունների տվյալների և չափազրումների արդյունքների միջև էական շեղումների (առնվազն 20%, իսկ օգտակար հանածոների արդյունահանման դեպքում՝ Կառավարության սահմանած չափի) առկայությունը համարվելու է հարկվող օբյեկտների հաշվառման սահմանված կարգի կոպիտ խախտում և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան՝ կիրառվելու են հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման անուղղակի եղանակները,

- չափազրումների արդյունքով արձանագրված տվյալների հիման վրա հարկային մարմինների կողմից հարկ վճարողների հարկային պարտավորությունները հաշվարկելիս հաշվի է առնվելու նաև սովորաբար տվյալ ոլորտի գործունեության տեսակի համար դիտարկվող համադրելի (համարժեք) ժամանակահատվածի հիմնական գործոնների ազդեցությունը՝ խելամիտ աստիճանի ջանքերի ներդրմամբ իրականացված ուսումնասիրությունների շնորհիվ:

Արտադրության և արդյունահանման իրական ծավալների հաշվառում

➤ Իրական ծավալների որոշման նպատակով սահմանվել են ծախսաչափային հանգույցների, ջրաչափ և գազաչափ սարքերի պարտադիր տեղադրման դրույթներ, որոնց կնքման, շահագործման և տվյալների արձանագրման կարգերը սահմանելու է Կառավարությունը՝

- 2009 թվականի հունվարի 1-ից՝ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի արդյունահանված պաշարների ու արտադրված ածխաթթու գազի համար

- 2010 թվականի հունվարի 1-ից՝ մրգային և բանջարեղենային հյութերի, բնական, արհեստական հանքային ջրերի, գարեջրի արտադրության համար:

➤ 2010 թվականի հունվարի 1-ից՝

- մրգային և բանջարեղենային հյութերի, բնական, արհեստական հանքային ջրերի արտադրությունն առանց ծախսաչափային հանգույցների իրականացնելու դեպքում գանձվելու է տուգանք հաշվարկային շրջանառության 25%-ի չափով,
- ծախսաչափային հանգույցների շահագործման կանոնները խախտելու համար տուգանք՝ 1,0 մլն. դրամի չափով:

Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների պարտավորությունների անուղղակի եղանակներով հաշվարկման հստակեցում

- Հարկային մարմինը կիրառելու է հարկային պարտավորություններն անուղղակի եղանակներով գնահատելու կարգը հետևյալ դեպքերում՝
 - հաշվարկ-հաշվետվություններ, տեղեկություններ չներկայացնելու կամ դրանց մեջ ակնհայտ կեղծ տվյալներ ներառելու դեպքում,
 - վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառում չվարելու կամ այդ հավառումը սահմանված կարգի խախտումներով վարելու դեպքում:

Գործարքների փաստաթղթավորման ապահովման վարչարարական մեթոդներ

- 2009 թվականի հունվարի 1-ից՝
 - հարկ վճարողը պարտավոր է գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում, առավել տեսանելի տեղում (իսկ գտնվելու վայրում՝ համապատասխան ցուցանակների վրա) փակցնել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ նշելով իր լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), ՀՎՀՀ-ն, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները), իսկ տեղեկությունները չփակցնելու դեպքում յուրաքանչյուր հասցեում չփակցրած տեղեկության մասով գանձվելու է տուգանք 50,0 հազ. դրամի չափով (խախտումն արձանագրելուց հաջորդող մեկ տարվա ընթացքում խախտման կրկնական փաստ արձանագրվելու դեպքում՝ 500,0 հազ. դրամի չափով)
 - ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման գործարքների համար սահմանված կարգով հաշվարկային փաստաթուղթ դուրս չգրելու դեպքում (այդ թվում՝ գնորդի պահանջով) գործարքի երկու կողմերից էլ գանձվելու է տուգանք՝ այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարի 20%-ի չափով, և ձեռք բերողները որպես հարկային գործակալ եկամտի վճարման աղբյուրի մոտ վճարում են եկամտահարկ 11% դրույքաչափով, բացառությամբ եթե՝
 - օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է վարձու աշխատանք,
 - գործարքների կողմերը իրականացրել են յուրաքանչյուր միանվագ գործարքի մասով 150,0 հազ. դրամը, իսկ այդպիսի գործարքների հանրագումարով ամսական 1,5 մլն. դրամը չգերազանցող ձեռքբերումներ,
 - գործարքների կողմերը այդ գործարքների համար որպես հաշվարկային փաստաթուղթ տրամադրել կամ ստացել են ՀԴՄ-ների կտրոններ կամ կրճատ հաշիվ-ապրանքագրեր,
 - գործարքների կողմերի մոտ բացակայում են այդ գործարքների համար դուրս գրված կամ ստացված հաշվարկային փաստաթղթերը, սակայն առկա այլ փաստաթղթերը (հաշվարկային փաստաթղթերի պատճենները, հարկային հաշիվների վերաբերյալ

երկկողմանի ներկայացված տեղեկությունները և այլն) բավարար են պարզելու, որ այդպիսի փաստաթղթերը դուրս են գրվել կամ ստացվել,

- գործարքների կողմերը սպրանքներ մատակարարելիս, ծառայություններ մատուցելիս կամ աշխատանքներ կատարելիս օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դուրս են գրել հաշվարկային փաստաթղթերը՝ նշելով իրենց տվյալները, սակայն գնորդը հրաժարվել է ստանալ հաշվարկային փաստաթուղթը, որի վերաբերյալ հաշվարկային փաստաթուղթում կատարվել է համապատասխան նշում,
- գործարքների կողմերը Կառավարության սահմանած կարգով և ձևով այդ գործարքների կատարմանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմիններին տեղեկություններ են ներկայացրել առանց հաշվարկային փաստաթղթերի (բացառությամբ՝ միանվագ գործարքի մասով 150,0 հազ. դրամը, իսկ այդպիսի գործարքների հանրագումարով ամսական 1,5 մլն. դրամը չգերազանցող ձեռքբերումների) գործարքների վերաբերյալ, որը հիմնավորվել է տեղեկությունների ներկայացման օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմինների կողմից երրորդ անձի միջոցով կատարված հսկիչ գնումների արդյունքում (իրականացված հսկիչ գնումների արդյունքների մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հարկ վճարողին, որը հիմք է հանդիսանում ձեռքբերողի համար կատարված ծախսերը համախառն եկամտիվ նվազեցնելու համար),

- փաստաթղթերը չեն համարվելու անապրանք և պատասխանատվության նորմերը չեն կիրառվելու, եթե ձեռք բերողը սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացրել է տեղեկություններ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասին, և որը սահմանված կարգով հիմնավորվել է հարկային մարմինների կողմից:

- Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետ կայքում տեղադրվելու են ԱԱՀ վճարող համարվողների ՀՎՀՀ-ները և անվանումները:

ՀԴՄ-ների ներդրման և շահագործման կանոնների, ՀԴՄ կիրառողների գործունեության կատեգորիան որոշման խախտումների համար պատասխանատվության խստացում

- Հստակեցվել է, որ ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր է առևտրի օբյեկտների (խանութ, կրպակ, տաղավար) և առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով իրականացվող մանրածախ վաճառքի դեպքում:
- 2009 թվականի հունվարի 1-ից՝
 - ՀԴՄ-ների բացակայության (սահմանված կարգով ներդրած չլինելու դեպքում) սահմանված տուգանքը 150,0 հազ. դրամից բարձրացվել է մինչև 300 հազ. դրամ, իսկ տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտման կրկնական փաստի արձանագրման դեպքում՝ 300,0 հազ. դրամից մինչև 600,0 հազ. դրամը,
 - ՀԴՄ-ների գրանցման կարգի կամ շահագործման կանոնների խախտմամբ ՀԴՄ-ների կիրառման համար սահմանված տուգանքը 75,0 հազ. դրամից բարձրացվել է մինչև 150,0 հազ. դրամ, իսկ տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտման կրկնական փաստի արձանագրման դեպքում՝ 150,0 հազ. դրամից մինչև 300,0 հազ. դրամի,

- ❖ *ԱԱՀ վճարող չհամարվողների համար պատասխանատվության նոր միջոցները կկիրառվեն 2010 թվականի հունվարի 1-ից սկսած, իսկ մինչ այդ կգործեն նախկին պատասխանատվության միջոցները,*
- *ՀԴՄ-ների գրանցման կարգի կամ շահագործման կանոնների կրկնական խախտման համար գործունեության կասեցման ընթացքում օբյեկտի տարածքի մուտքը (մուտքերը) կամ տարածք մուտք գործելու այլ հնարավոր ուղիները կնքելու, կապարակնքելու, դրոշմելու, թվային, տառային կամ կիրառված այլ դրոշմավորման եղանակն առաջին անգամ վնասելու և կասեցման օբյեկտում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն առաջին անգամ իրականացնելու դեպքում կասեցման սուբյեկտները տուգանվելու են 300,0 հազ. դրամի չափով, իսկ խախտումն երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում՝ 2,0 մլն. դրամի չափով:*

Ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարման հարկումը

2009 թվականի հունվարի 1-ից սկսած, անկախ ԱԱՀ-ի շեմից, ԱԱՀ-ով կհարկվեն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող նույն տեսակի գույքի (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ կիսակառույց), ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողեր, ավտոտնակ) յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում 2 և ավելի անգամ օտարումը (եթե այն կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում):

Ֆիզիկական անձանց պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը ԱԱՀ-ով չի հարկվելու:

Շենքերի, շինությունների վարձակալության կամ անհատույց տրամադրման հարկման առանձնահատկությունները

2009 թվականի հունվարի 1-ից սկսած, շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ /կիսակառույց/), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների մասով՝

- ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը հաշվարկվելու է գույքահարկով հարկման նպատակով որոշված կադաստրային արժեքի 5%-ից, որը բաշխվելու է ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջաններին հավասարաչափ,
- կազմակերպությունների հարկվող շահույթը, իսկ անհատ ձեռնարկատերերի հարկվող եկամուտը որոշելիս եկամուտը հաշվարկվելու է գույքահարկով հարկման նպատակով որոշված կադաստրային արժեքի 5%-ից ոչ պակաս և այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվելու է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն (շինության մի մասը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքում նվազագույն չափ է համարվելու շինության ընդհանուր մակերեսում տվյալ տարածքի բաժնեմասին համապատասխանող կադաստրային արժեքի 5%-ը):